Հասցեատեր՝

«Փյունիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	Կ-001
Խախտում՝	«Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի կողմից • պատշաճ վարքագծի հիմնական կանոնների խախտումը, • սպորտային միջոցառումները ոչ սպորտային բնույթի դրսևորումների համար օգտագործելը, • ՀՖՖ հեղինակությունը, ՀՖՖ համապատասխան մարմինների և ղեկավար կազմի վարկաբեկումը • (Հոդված 9-ի 2-րդ կետի 1.2, 1.3, 1.4-րդ ենթակետեր)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն (այուհետ՝ Կոմիտե),

Հաշվի առնելով 2023 թվականի օգոստոսի 30-ին թիվ Կ-001 կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշման մեջ տեղ գտած վրիպակները,

Հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 37-րդ հոդվածի 12-րդ կետը որոշեց՝

2023 թվականի օգոստոսի 30-ին թիվ Կ-001 կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման՝ «**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահի Որոշում**» վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ «**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության Կարգապահական և էթիկայի կոմիտեի Որոշում**»:
2. Որոշման 2-րդ կետում «փորձաշրջան սահմանել 4 (երեք) ամիս ժամկետով» նախադասության հատվածը շարադրել «փորձաշրջան սահմանել 4 (չորս) ամիս ժամկետով»:
3. Որոշման «Ծանուցում» հատվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

<u>«Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից:»:

4. Հանձնարարել ՀՖՖ կարգապահական գրասենյակին Ֆուտբոլային սուբյեկտին ծանուցել սույն որոշման վերաբերյալ:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան